

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

19.02.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ.Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյան - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Ա.Մատինյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Ա.Ադրյանը, Ա.Սահակյանը, Լ.Բերդյանը, Ս.Ղուբաթյանը, Վ.Դոխտյանը, Հ.Մկրտչյանը, Ն.Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին /Ջեկ. Ն.Սարգսյան/
2. Պետական գերատեսչությունների կողմից տրված հանձնարարականների մասին /Ջեկ. մարզպետի տեղակալներ/
3. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին /Ջեկ. Հ.Պապոյան/
4. Մարտի 5-ի և մարտի 8-ի միջոցառումների մասին /Ջեկ. Մ.Սայադյան/
5. Մարզի համայնքներին պարարտանյութերի և սերմացուների բաշխման գործընթացի մասին: /Ջեկ. Գ.Հակոբյան/
Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին՝

ա/ Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել և հսկողություն սահմանել մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների ապահովման ուղղությամբ:

բ/ Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին և հսկողություն սահմանել՝ միջոցներ ձեռնարկելու 500 000 դրամից ավել հարկային պարտավորություններ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարումները սահմանված կարգով և ժամկետներում կատարելու ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում վճարումները իրականացնել նաև դատական կարգով:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Մ. Սայադյանին՝

Ներկայացնել առաջարկություններ մարտի 5-ի և մարտի 8-ի միջոցառումների անցկացման վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Գ. Հակոբյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզի համայնքներում պարարտանյութերի և սերմացուների գումարների հավաքագրման ու բաշխման գործընթացի նկատմամբ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ